ԳԵՎՈՐԳ ՍՐԱՊԻՈՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 1966
Ծննդավայր՝ ՀՀ, ք. Սիսիան

Ծնվել է 1966 թ. Սիսիան քաղաքում, վաստակաշատ հյուսն-վարպետ Սրապիոն Ստեփանյանի ընտանիքում: Արմատներով Հայոց հինավուրց Նախիջևանի Ճահուկ գավառի Սաղվասոնք գյուղից է:

1983 թ. ավարտել է Սիսիանի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1986-1988 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1992 թ. ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության և աշխարհագրության ֆակուլտետը:

1992-1996 թթ. սովորել է նույն ինստիտուտի ասպիրանտուրայում՝ հայոց պատմություն մասնագիտությամբ:

1996 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ.» թեմայով և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2008 թ. ստացել է դոցենտի, 2013 թ.՝ պրոֆեսորի կոչում:

2009 թ. պաշտպանել է դոկտորական թեզ՝ «Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին» (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն) թեմայով և ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Նշված թեմաներով հեղինակ է գիտական մի շարք հոդվածների: Կարդացել է զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

2010 թ. հրատարակել է «Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին» (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն) աշխատությունը:

2011 թ. հրատարակել է «Բաքու քաղաքի հայության պատմությունը» (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն) աշխատությունը:

Գ. Ստեփանյանի գիտական ղեկավարությամբ 1 հայցորդ (Ա. Ասատրյան (2025) հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

Գևորգ Ստեփանյանն աշխատել է Սիսիանի հանրակրթական մի քանի դպրոցներում: Եղել է գիտամեթոդական աշխատանքների գծով փոխտնօրեն Սիսիանի պետական հումանիտար քոլեջում, ապա՝ 2002 թ. անցել է դասախոսական աշխատանքի Գորիսի պետական համալսարանում: 2004-2007 թթ. եղել է նույն համալսարանի պատմության ամբիոնի առաջին ընտրված վարիչը և Ստեփանոս Օրբելյանի անվան պատմության կաբինետի հիմնադիրը: 2016 թվականից դասավանդում է Երևանի պետական համալսարանում:

2008 թ. նոյեմբերից աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության» բաժնում որպես ավագ գիտաշխատող: 2016 թ. աշխատում է որպես ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության» բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող է, 004 «Հայոց պատմության» մասնագիտական խորհրդի անդամ է:

Պարգևատրվել է Արցախի Հանրապետության «Երախտագիտություն» շքանշանով:

Հեղինակ է 4 մենագրության, ավելի քան 100 գիտական հոդվածների:

Ամուսնացած է, ունի երկու զավակ՝ Սիփան և Սասուն: